

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Արայիկ Հարությունյանին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Իրինա Գասպարյանից
(դիմողի անուն, ազգանուն)

Ք. Երևան, 0050, Ղարիբջանյան 48, 091432961, Irkongas@gmail.com
(բնակության վայր, հեռախոսի համար, էլ. փոստի հասցե)

«Հայաստանի ստորական «Խայադթա» Ֆեդերացիա» ՀԿ, 211.171.1010033
(կազմակերպության լրիվ անվանումը, պետ. գրանցման համարը)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին
կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Տեղեկանք ծավալած գործունեության վերաբերյալ.
2. Մոտիվացիոն նամակ հիմնավորում՝ հասարակական խորհրդում
կազմակերպության ներգրավման աշխատանքների մասնակցության
վերաբերյալ.
3. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ
գործունեության և կրթության բնագավառում իրականացվող
քաղաքականության վերաբերյալ:

Դիմող՝
< 24 > մայիս 2018 թ.

Իրինա Գասպարյան

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ
Մո. ք. № 15734-18
25 05 2018թ.

Տեղեկանք ծավալած գործունեության վերաբերյալ

«Հայաստանի ասորական «Խայադթա» ֆեդերացիան» երկար տարիներ արդյունավետ համագործակցում է ՀՀ ԿԳՆ հետ: Շնորհիվ այդ համագործակցության ասորական համայնքը բավականին ամրացել է և առաջադիմել: Հայաստանում ասորական համայնքի առաջընթացը բարձր է գնահատվում նաև այլ երկրների ասորական համայնքների կողմից:

«Հայաստանի ասորական «Խայադթա» ֆեդերացիայի» նախագահ Իրինա Գասպարյանը 1998 թվականին մշակել և ՀՀ Ազգային ժողով է ներկայացրել «Ասորերեն լեզվի պահպանման և զարգացման» հայեցակարգը, որն Ազգային ժողովի Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի և ՀՀ Կառավարության կողմից արժանացել է հավանության:

1998 թվականին այդ հայեցակարգի շրջանակներում ՀՀ կրթության և գիտության նախարարությունում մշակվեցին և հաստատվեցին ասորերեն լեզվի ուսումնական ծրագրեր 1 – 12-րդ դասարանների համար: Նույն թվականին ասորերեն լեզուն և գրականությունն ընգրկվեցին ասորական գյուղերի դպրոցների (Վերին Դվին, Դիմիտրով, Արզնի) պարտադիր ուսուցման ծրագրում և Երևան քաղաքի № 8 դպրոցում բացվեց մեկ դասարան՝ ասորերենի ուսումնասիրությամբ:

ՀՀ ԿԳ նախարարությանը կից ստեղծվեց սեմիթական լեզուների մեթոդական խումբ, որում ասորերեն լեզվի մասը առ այսօր ղեկավարում է Իրինա Գասպարյանը: Այդ մեթոդական խմբում պատրաստվել և տարբեր տարիներին հրատարակվել են ասորական դասագրքեր, որոնք մինչ օրս գործածվում են ասորերեն լեզվի ուսումնասիրությամբ դասարաններում:

«Ասորերեն լեզվի պահպանման և զարգացման» հայեցակարգի շրջանակներում, համագործակցելով ՀՀ ԿԳ նախարարության և Երևանի պետական համալսարանի հետ, պատրաստվել և պատրաստվում են, նաև ժամանակ առ ժամանակ վերապատրաստվում են ասորերեն լեզվի տասնյակ մանկավարժներ:

2000 թվականին ստեղծվեց ՀՀ Նախագահի աշխատակազմին կից ՀՀ ազգային փոքրամասնությունների հարցերով համակարգող խորհուրդ: Այդ խորհրդի առաջին կազմում, որպես ասորական համայնքի ներկայացուցիչ, ընգրկվեց և մինչ օրս աշխատում է Իրինա Գասպարյանը:

Իրինա Գասպարյանը 1999 թ.-ին որպես Հայաստանի պատվիրակության ղեկավար մասնակցել է Ասորական կոնֆերանսների աշխատանքներին Իրանում, որտեղից պատվիրակության կազմում այցելել է Իրաք, իսկ 2002թ.-ին Մոսկվայում, որտեղ հանդես է եկել ասորիների մասին զեկույցով:

2000 թվականին Իրինա Գասպարյանը ստեղծեց «Հայաստանի ազգային փոքրամասնությունների միություն» ՀԿ: ՀԿ-ով իրականացվել են միջազգային ծրագրեր, որի շրջանակներում Իրինա Գասպարյանն ակտիվ համագործակցել է Վրաստանում իրականացվող ծրագրերին՝ որպես ազգային փոքրամասնությունների Հայաստանի ներկայացուցիչների խմբի ղեկավար,

պարբերաբար հրավիրվել է Վրաստան՝ որպես ազգային փոքրամասնությունների պաշտպանության հարցերով փորձագետ:

Իրինա Գասպարյանը համագործակցել և մինչ օրս ակտիվ համագործակցում է Եվրոպայի խորհրդի հետ, անցել է ուսուցում ԵՄ Լիդերների դպրոցում, մասնակցել է ԵՄ կողմից կազմակերպված սեմինարներին Ստրաստբուրգում և Բուդապեշտում:

2007թ. ՀՀ նախագահի ֆինանսական աջակցությամբ, Իրինան Երևանում կազմակերպել է Ասորական Ամանորի տոնակատարությունը՝ Հայաստանի հասարակության մասնակցությամբ: Այդ միջոցառմանը ՀՀ Նախագահի անունից ասորական համայնքին շնորհավորել էր ՀՀ նախագահի խորհրդականը:

2009 թվականին ստեղծվեց «Ասորերեն լեզվի և գրականության» առարկայական չափորոշիչ, որի հեղինակներից մեկը Իրինա Գասպարյանն է: Այն հաստատվեց ՀՀ ԿԳ նախարարության կողմից:

2009 թվականին Իրինա Գասպարյանն Արամ Խաչատրյան համերգասրահում կազմակերպեց և անցկացրեց «Ծիածան» փառատոնը: Մա Հայաստանում առաջին համերգային փառատոնն էր, որում ազգային փոքրամասնության երիտասարդ ներկայացուցիչների հետ միասին նաև ելույթ ունեցան հայկական էտրադայի աստղերը: Որպես պատվավոր հյուր ներկա է եղել ՀՀ վարչապետը:

ՀԱԿ «Նոյադթա» ֆեդերացիան «Հանրային ցանցի» անդամ է դարձել 2012 թվականից: 2013 թվականի սեպտեմբերին Իրինա Գասպարյանը ընտրվել է «Հանրային ցանցի» կրթության և գիտության հանձնախմբի պատասխանատու և ցանցի խորհրդի անդամ:

«Հանրային ցանցը» գործում է 2008 թվականից, միավորում է ՀՀ-ում գրանցված և գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) և, որի նպատակն է պետական կառույցների, Ազգային ժողովի և ՔՀԿ-ների միջև արդյունավետ համագործակցության ինստիտուցիոնալ մեխանիզմների ձևավորման, ներդրման ու զարգացման միջոցով խթանել պետական քաղաքականության և օրենսդրական բարեփոխումների մշակման, ընդունման և վերահսկման գործընթացներում ՔՀԿ-ների մասնակցությունը:

2010 թվականին «Հանրային ցանցը» ստորագրել է համագործակցության Հուշագիր 4-րդ գումարման ՀՀ Ազգային ժողովի հետ, 2012 թ. հուշագիրը ստորագրվել է նաև 5-րդ գումարման ՀՀ Ազգային ժողովի հետ և համագործակցում է կառավարության հետ, որպես ԱՀՌԾ, ԿԶԾ, ՀԶԾ քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցի անդամ:

«Հանրային ցանցի» հետ համագործակցության շրջանակներում Իրինա Գասպարյանն ակտիվ ներգրավված էր կրթության և գիտության, սոցիալական, մարդու իրավունքների ոլորտներում քաղաքականության և օրենսդրական բարեփոխումների գործընթացներում: Դիտարկումներն ու առաջարկները քննարկման առարկա են դարձել կառավարության համապատասխան գերատեսչություններում և ՀՀ ԱԺ-ի համապատասխան հանձնաժողովներում: Ներկայացված առաջարկներն ընդունվել են մասնավորապես՝ «Հանրակրթության մասին», Կուտակային կենսաթոշակային, Ժամանակավոր անաշխատունակության,

Ջրաղվածության, միջնակարգ մասնագիտական կրթության, Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքներում: Վերջին լուրջ առաջարկը, որ ընդունվել է, ՀՀ ընտրական օրենսգրքի նախագծում ազգային փոքրամասնությունների և նրանց հայերենի իմացության գնահատման մեխանիզմին էին առնչվում:

2010 թվականին Իրինա Գասպարյանը ՀՀ Նախագահի կողմից պարգևատրվել է շնորհակալագրով «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ազգային – մշակութային կազմակերպությունների գործունեությունը համակարգող խորհրդի կազմում երկարամյա, արդյունավետ աշխատանքի և միջամայնքային համագործակցությանը նպաստելու համար»:

2011 թվականին Իրինա Գասպարյանը նախաձեռնեց աշխարհի 13 երկրներից ասորական պատվիրակությունների այցելությունը Հայաստան: Տեղի ունեցան մի շարք հանդիպումներ ՀՀ վարչապետի, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների հետ: Քննարկվեցին ասորական համայնքի արդիական հարցերը, միջազգային ասորական շարժման և Հայաստանի համագործակցության խնդիրները՝ ասորական համայնքին աջակցելու նպատակով:

2012 թվականից ՀՀ Կառավարության աջակցությամբ և Իրինա Գասպարյանի ղեկավարությամբ հրատարակվում է «Ассирийские новости» թերթը, որի խմբագրական կազմում ընդգրկված են տարբեր երկրների՝ Ուկրաինայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, ասորական համայնքների ներկայացուցիչներ:

2012 թվականին Երևանի Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոցում բացվեց մեկ դասարան ասորերենի ուսուցմամբ:

2015 թվականի ապրիլի 22-23-ը Երևանում անցկացվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ հասարակական-քաղաքական ֆորումը, որին Իրինա Գասպարյանի գլխավորությամբ իրենց մասնակցությունն ունեցան նաև ասորական պատվիրակությունները աշխարհի 13 երկրներից:

Մինչ օրս Իրինա Գասպարյանի ղեկավարությամբ ամեն տարի Կրթության ազգային ինստիտուտի ներքո պարբերաբար կազմակերպվում են՝ ասորերենը դասավանդող ուսուցիչների վերապատրաստումը, վերապատրաստումների ծրագրերի մշակումը:

Իրինա Գասպարյանը ստեղծել է ասորերեն լեզվի մասնագետների բազա: Իր ղեկավարությամբ ասորերենի մասնագետների խումբը պարբերաբար վերամշակում է ասորերեն լեզվի ուսումնական ծրագրերը, վերանայում և պատրաստում է հրատարակության ասորերեն լեզվի դասագրքերը:

**Մոտիվացիոն նամակ-հիմնավորում՝ հասարակական խորհրդում
կազմակերպության ներգրավման աշխատանքների
մասնակցության վերաբերյալ**

Համագործակցելով ՀՀ ԿԳ նախարարության հետ ստեղծել մեխանիզմներ՝ ասորերեն լեզվի դասավանդման ընթացքը և ուսուցիչների որակը հսկելու, ասորերեն լեզվիով դասագրքերի ստեղծման ընթացքը շարունակելու, ասորերենով տարբեր մակարդակի օլիմպիադաներ կազմակերպելու, ասորերենի և ասորական ավանդույթների տարածմանը նպաստելու:

Հայաստանում ստեղծել ասորերեն լեզվի ուսուցման միջազգային կենտրոն, քանի որ մեր հնարավորությունները թույլ են տալիս ապահովել միջազգային մակարդակով որակյալ ասորերենի ուսուցում:

ՀՀ ԿԳՆ-ի ներքո մշակել ասորերենը դասավանդող մասնագետների նշանակման քաղաքականությունը, որը հնարավորություն չի տա դպրոցների տնօրեններին ասորերեն լեզվի ուսուցիչ նշանակել ասորերենին չտիրապետող անձանց:

Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

ՀՀ ԿԳՆ-ի իրականացվող քաղաքականությունը հանգեցնում է այն քանին, որ կրթության օջախներում որակյալ մասնագետների քանակը նվազում է: Հատկապես դա վերաբերում է բուհական համակարգին քանի որ՝

- Դասախոսների միջին աշխատավարձը 50 000-ից մինչև 80 000 դրամ է, ինչը նաև հանգեցնում է այն քանին, որ երիտասարդ սերունդը ԲՈՒՀ-ն ավարտելուց հետո ցանկություն չունի մնալ ԲՈՒՀ-ում աշխատել որպես դասախոս;
- Բուհերի ֆինանսավորումը կախված է ուսանողների վճարումներից: Դա հանգեցնում է այն քանին, որ բուհերում ձգտում են ընդհանրապես չսովորող ուսանողին էլ բուհից դուրս չթողնել;
- Ուսման վարձը այնքան բարձր է, որ առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողները ստիպված են նաև աշխատել, որպեսզի ուսման վարձը վճարեն: Հետևաբար այդ ուսանողները, որպես կանոն, ծրագիրը չեն կարող յուրացնել;
- Դասախոսների աշխատավարձ երի հաշվարկը արվում է միայն լսարան մտնելու ժամերի քանակով չի կարող նպաստել դասախոսի որակի բարձրացմանը, քանի որ որակյալ դաս անցկացնելու համար դասախոսը նաև պարտավոր է ինքնագարգացմամբ զբաղվել, որը բավական ժամանակատար է: Պարզ է, որ այդ պայմաններում գիտության մասին խոսք լինել չի կարող;
- Բուհերի դասախոսները նաև զրկված են որևէ պետական բժշկական աջակցությունից, իսկ այդ աշխատավարձով անհնարին է առողջ մնալ;
- Բուհի ղեկավարության և ադմինիստրացիայի վարձատրումը կտրուկ տարբերվում է պրոֆեսորադասախոսական կազմի վարձատրությունից: Բուհի ղեկավարությունը սկսած ինստիտուտների տնօրենների, տեղակալներից վարձատրվում են 250 000-ից սկսած չհաշված դուրս գրվող պրեմիաները:

Դասախոսները բուհերի զինվորների են նման, քանի որ բուհի կրթական ընթացքը ապահովում են ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ:

ՉԼԻՆԻ ԴԱՍԱԽՈՍ, ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՈՒՆԵՆԱ ՈՐԵՎԷ ԲՈՒՀ:

Բացի այդ, ինստիտուտների տնօրենները երբեմն նաև իրենց իրավունք են վերապահում դասախոսին վիրավորել կամ ձայնը բարձրացնել ուսանողների ներկայությամբ, ինչը արդեն արձագանքում է ոչ ակադեմիական մթնոլորտի մասին: